ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1 **Կարդացե՛ք մեջբերումը և նշե՛ք խոսքերի հեղինակին:**

«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ»:

1) Տակիտոս
2) Պլուտարքոս
3) Պոլիբիոս
4) Ապպիանոս

2 **Բայազետի բերդի ո՞ր թվականի գրավման մասին է մեջբերված խոսքը.**

«Բայազետի հայերը չափազանց քաջ կռվողներ էին… Հայերը բացահայտորեն իրենց նպաստն էին բերում Ռուսաստանին»:

1) 1915 թ. ապրիլի 15
2) 1828 թ. օգոստոսի 28
3) 1877 թ. ապրիլի 30
4) 1916 թ. փետրվարի 7

3 **1921 թ. ի՞նչ պաշտոն է զբաղեցրել մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և կարելիության առաջին պայմանը»:

1) ՀՍԽՀ ռազմական գործերի ժողկոմ
2) ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմ
3) ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ
4) ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմ

4 **Մեծ Հայքի ո՞ր թագավորին է հույն պատմիչ Արիանոսը բնութագրել հետևյալ խոսքերով.**

«Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

1) Տիգրան II
2) Արտաշես I
3) Վռամշապուհ
4) Սանատրուկ

5 **Ո՞ր ճակատամարտին է վերաբերում հայ մարտիկների փոխադարձ քաջալերանքը, որ մեջբերված է Ղևոնդ պատմիչի հաղորդած տեղեկությունից.**

«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:

1) Արճեշ
2) Ներսեհապատ
3) Արձնի
4) Ճարմանա

6 **Ո՞ր քաղաքի հայերն են հետևյալ խոսքով դիմել Ռուսաստանի դեսպան Նելիդովին.**

«Բարենորոգումների ծրագրի հարցը նոր չէ, և մենք հաճախ ենք հուսախաբ եղել մեր արդար սպասելիքներում, որոնք, թվում է, վաղուց պիտի կենսագործված լինեին…»

1) Շապին Կարահիսար
2) Կոստանդնուպոլիս
3) Սասուն
4) Զեյթուն

7 **Ո՞վ է Հայաստանը բնութագրել որպես** *«կամուրջներ չհանդուրժող Արաքս»:*

1) Ստրաբոն
2) Տակիտոս
3) Դիոն Կասիոս
4) Վերգիլիոս

8 **Ո՞ր պայմանագրի կնքման կապակցությամբ է արտահայտվել հետևյալ միտքը.**

«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը. քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:

1) 1254 թ. հայ-մոնղոլական պայմանագիր
2) 652 թ. հայ-արաբական պայմանագիր
3) 893 թ. հայ-բյուզանդական պայմանագիր
4) 484 թ. հայ-պարսկական պայմանագիր

9 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի գլխավորությամբ ստեղծվեց նոր կառավարություն, որը ստացավ Ժամանակավոր կառավարություն անվանումը:
2) 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում գումարված Այսրկովկասի քաղաքական և ռազմական ուժերի ներկայացուցիչների խորհրդակցության ընթացքում ձևավորվեց օրենսդիր բարձրագույն մարմինը, որը ստացավ Սեյմ անվանումը:
3) 1918 թ. մարտի 1-ին Հայկական կորպուսի և արևմտահայ զինուժի միավորմամբ ստեղծված մարմինը անվանվեց Առանձին հայկական կորպուս:
4) 1918 թ. ապրիլի 9-ին Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության անկախության հռչակմամբ ստեղծվեց գործադիր իշխանության նոր մարմին, որն անվանվեց Անդրկովկասի հատուկ կոմիտե:

10 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ:**

ա. Հյուսիսային Արցախի լիակատար հայաթափման համար 1991 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունների մշակած ռազմական գործողության ծրագիրը անվանվում էր «Կոլցո»:

բ.1989 թ. օգոստոսի 16-ին տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմինը անվանվում էր Ազգային խորհուրդ:

գ. 1992 թ. մայիսի 4-ին ծրագրված Շուշիի գրավման ռազմական գործողությունը կոչվում էր «Հարսանիք քաղաքում»:

դ. 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ պատերազմ սկսած ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները անվանվում էին ՕՄՕՆ:

ե. 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի ընդունած որոշումը կոչվում էր «ՀԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»:

զ. 1988 թ. փետրվարի 22-ին Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու համար ստեղծված կոմիտեն անվանվում էր «Ղարաբաղի ազատագրման Հայաստանի կոմիտե»:

է. 1988 թ. փետրվարի 21-ին ԽՄԿԿ կենտկոմի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումով հայության արդարացի շարժումը անվանվեց «ծայրահեղական»:

1) բ, գ, դ
2) ա, ե, է
3) բ, դ, զ
4) գ, ե, զ

11 **Հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) Վանի թագավորության արձանագրություններում հիշատակվող գործակալություններց մեկը անվանվում էր «Սահմանապահ կուսակալ»:
2) Արգիշտի Ի-ի օրոք Վանի թագավորությունը բաժանվել է վարչատարածքային միավորների, որոնք կոչվում էին կողմնակալություններ:
3) Արտաշես Ի-ի կողմից արքունական և մասնավոր հողատարածքների միջև տեղադրված քարերը կոչվում էին սահմանաբաժան հողաքարեր:
4) Արտաշես Ի-ի օրոք Մեծ Հայքում գոյություն ունեցած խոշոր մասնատիրական հողերը կոչվում էին ավատներ:

12 **591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրից հետո Հայաստանի տարածքում բյուզանդացիների ստեղծած վարչատարածքային միավորներից ո՞րն էր համապատասխանում Բարձր Հայքի տարածքին:**

1) Չորրորդ Հայք
2) Մասն Մեծ Հայոց
3) Խորագույն Հայք
4) Մեծ մասն Մեծ Հայոց

13 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա. Արցախի ազատագրական պայքարին օժանդակելու համար Գանձակից Արցախ են ժամանել Իվան և Թարխան հարյուրապետները իրենց համախոհներով։

բ. 1723 թ. աշնանը թուրքական բանակը ներխուժել է Արարատյան դաշտ և գրավել ու կողոպտել հայկական գյուղերը։

գ. 1725 թ. մարտին թուրքական երեք զորամաս ներխուժել է Արցախի Վարանդա գավառ և տեղավորվել Արցախի 33 հայկական գյուղերում։

դ. 1722-1724 թթ. Սյունիքում հայկական զորքերը գրավել են Տաթև գյուղի մերձակա ամրոցը, Զևա և Որոտան բերդերը։

ե. 1724 թ. Օսմանյան կայսրությունը ճանաչել է Սյունիքում ստեղծված հայկական իշխանությունը և կնքել դաշինք Դավիթ բեկի հետ։

զ. 1727 թ. Հալիձորի ճակատամարտում թուրքական բանակից զոհվել է 20.000 զինվոր և խլվել 148 դրոշ։

է. Նադիրի բանակում մարտնչել են Դիզակի մելիք Եգանը, Գեղարքունիքի մելիք Շահնազարը, Երևանի մելիք Հակոբջանը և ուրիշներ։

1) ա, գ, դ
2) ա, զ, է
3) բ, ե, զ
4) գ, դ, է

14 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

ա. 1923 թ. շրջանառության մեջ մտած գյուղմիասհարկը գյուղացուն հնարավորություն է տվել պարենհարկը վճարելու ցանկացած ապրանքով։

բ. Արդյունաբերացման տարիներին քիմիական արդյունաբերության նոր կենտրոն է դարձել Լենինականը, որտեղ կառուցվել է խոշոր քիմիական կոմբինատ՝ կարբիդի արտադրամասով։

գ.Նէպի կենսագործման տարիներին Հայաստանում դրվել են արդյունաբերության հիմքերը, վերականգնվել է գյուղատնտեսությունը։

դ. 1929 թ. վերջին հայտարարվեց նէպից հրաժարվելու և կուլակությանը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին։

ե.1936 թ. ԽՍՀՄ կառավարության Հայաստան ուղարկած ստուգող հանձնաժողովը որոշել է, որ Հայաստանի ղեկավարությունը ցուցաբերել է ազգայնամոլական մոտեցումներ։

զ. 1930-ական թվականներին Հայաստանում բռնությունների է ենթարկվել 2100 մարդ, որից 500 մարդ գնդակահարվել է։

է. Գրիգոր Դ-ից հետո կաթողիկոս դարձած Խորեն Մուրադբեկյանը խեղդամահ է արվել Էջմիածնում:

1) ա, բ, դ
2) դ, ե, է
3) գ, ե, զ
4) բ, զ, է

15 **Տրված տարբերակներից ո՞րն է ճիշտ արտացոլում Վաղարշ II-ի արտաքին քաղաքականության արդյունքները:**

1) Ի պաշտպանություն Սեպտիմիոս Սևերոսի մասնակցել է Իսոսի ճակատամարտին:
2) Հռոմեական կայսրության վճարած ռազմատուգանքի շնորհիվ վերակառուցվել է Արտաշատ մայրաքաղաքը:
3) Երկարատև պայքարից հետո Մեծ Հայքի գահին է բազմել օրինական գահաժառանգ Բակուր Արշակունին:
4) Հռոմի վճարած գումարով իրականացրել է Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանությունը:

16 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Տիզբոնից հայրենիք վերադառնալուց կարճ ժամանակ անց՝ 450 թ. ապրիլին, Վարդան Մամիկոնյանը հայտնել է ապստամբության մասին:
2) Պարսից արքայի պահանջով Տիզբոն ժամանած հայ նախարարները հայրենիք վերադառնալու և ապստամբություն կազմակերպելու համար առերես ընդունել են զրադաշտականությունը:
3) Հովսեփ Ա կաթողիկոսից հետո Սբ Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովը Հայոց կաթողիկոս է ընտրել Հովհաննես Ա Մանդակունուն:
4) 447 թ. պարսից տերության կողմից Մուշկան Նյուսալավուրտի անցկացրած աշխարհագրից հետո հայ ժողովրդի վիճակը ծանրացել է:

17 **Տրվածներից որո՞նք են 1901 թ. Մշո Սբ Առաքելոց վանքի կռվի հետևանքներ։**

ա. Զինաթափվել ու պատժվել են հայկական գյուղերն ավերող քրդական զինված ավազակախմբերը։

բ. Բարձրացրել է հայության մարտական ոգին, միաժամանակ արձագանք է գտել արտասահմանում։

գ. Մասնակի բավարարում է ստացել հայդուկային պայքարի ղեկավարների՝ քաղաքական բանտարկյալներին ներում շնորհելու պահանջը։

դ. Կառավարությունը պարտավորվել է զորքերը դուրս բերել Մուշից և տեղում նշանակվել է եվրոպացի կառավարիչ։

ե. Մեծ տերություններին հիշեցրել է, որ հայկական բարենորոգումները կյանքի չեն կոչվել։

զ. Ազատագրական պայքարի գործիչները դադարեցրել են պարտիզանական գործողությունները և հայդուկներին դուրս են հանել Երկրից։

է. Վերացվել է հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետերի իրավունքը։

1) ա, գ, դ
2) ա, դ, է
3) դ, ե, զ
4) բ, գ, ե

18 **Տրվածներից որո՞նք են Թուրքիայից տարածքային պահանջներից հրաժարվելու ԽՍՀՄ կառավարության 1953 թ. հայտարարության պատճառները։**

ա. Սառը պատերազմի սկսվելը։

բ. Հայրենական պատերազմից հետո Գերմանիայի կողմից Թուրքիայի զինումը։

գ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը։

դ. ՄԱԿ-ի կազմավորումը և դրան Թուրքիայի անդամակցելը։

ե. Թուրքիայի անդամակցելը Հյուսիսատլանտյան դաշինքին։

զ. Ֆրանկլին Ռուզվելտի և ԽՍՀՄ ղեկավար Ստալինի միջև կայացված համաձայնությունը։

է. Հայկական տարածքների հաշվին Թուրքիայից տարածքային այլ զիջումներ ստանալը։

1) ա, գ, ե
2) բ, դ, է
3) ա, ե, զ
4) գ, դ, է

19 **Տրված ձևակերպումներից ո՞րը ճիշտ չի ներկայացնում Երվանդունյաց ժամանակաշրջանին վերաբերող իրադարձությունների պատճառահետևանքային կապը:**

1) Ապստամբած երկրները վերանվաճելու նպատակով Դարեհ I-ն ստիպված է եղել Ք. ա. 522-521 թթ. արշավանքներ ձեռնարկել մի շարք ուղղություններով:
2) Քսերքսես II-ից կրած պարտության ամոթը փարատելու համար Քսենոփոնի զինված ուժերը որոշել են գրավել Հայաստանի տարածքը և այդպիսով դուրս գալ Սև ծովի ափ:
3) Երվանդ II սատրապն իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է Հունաստանում, որովհետև մինչ այդ մասնակցել է Աքեմենյանների դեմ բարձրացված ապստամբությանը:
4) Ալեքսանդր Մակեդոնացին ուղարկել է Մենոն զորավարին Բարձր Հայքի ոսկու հանքերը գրավելու նպատակով:

20 **Տրված պնդումներից ո՞րն է սխալ:**

1) Դանիթ Անհաղթի կարծիքով Արեգակը բազմապատիկ մեծ է Երկրից:
2) Հայոց բուն թվականի սկիզբ է համարվում 550 թ. հուլիսի 11-ը:
3) Կոմիտաս կաթողիկոսի օրոք եկեղեցու հայրերի գրվածքներից հավաքվել է «Կնիք հաւատո» ժողովածուն:
4) Գյուտ կաթողիկոսի կարծիքով նյութական աշխարհի հիմքում ընկած են չորս տարրերը:

21 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը Թավրիզում։
բ. «Դրոշակ» թռուցիկ թերթի անդրանիկ համարի հրատարակումը։
գ. Հնչակյան կուսակցության պառակտումը երկու թևի։
դ. Բշարե Խալիլի սպանությունը։
ե. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի հրավիրումը Թիֆլիսում։
զ. Արաբոյի զոհվելը Գյալիսորի ձորում։
է. Հնչակյան կուսակցության Կարինի և Տրապիզոնի մասնաճյուղերի ստեղծումը։

1) է, բ, ա, ե, զ, գ, դ
2) բ, ա, է, դ, գ, ե, զ
3) է, ա, բ, գ, ե, զ, դ
4) ա, բ, է, ե, զ, դ, գ

22 **1920 թ. տեղի ունեցած իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. Հայհեղկոմի՝ «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը։
բ. Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) հիմնումը։
գ. ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու որոշման ընդունումը։
դ. Բաքվում հրավիրված ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի համատեղ նիստում հայ-ռուսական պայմանագրի նախագծի քննարկումը։
ե. Ալեքսանդրապոլում հայ-թուրքական հաշտության բանակցությունների սկիզբը։
զ. Թուրք-հայկական պատերազմում Սարիղամիշի և Կաղզվանի գրավումը։
է. ՀՀ խորհրդարանի, կառավարության և դաշնակցության բյուրոյի միացյալ նիստում «որոշ պայմաններով» խորհրդայնացման պահանջի ընդունումը։

1) գ, զ, ե, բ, ա, դ, է
2) զ, գ, դ, ե, է, բ, ա
3) գ, զ, դ, ե, բ, ա, է
4) զ, գ, ե, դ, է, ա, բ

23 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Մեր քաղաքականությունը միտված է ապահովելու, որ կայուն եկամուտ ունեցող յուրաքանչյուր ոք դառնա սեփականատեր: Մենք կառուցում ենք սեփականատերերի ժողովրդավարություն»:

1) Ինդիրա Գանդի
2) Մարգարետ Թեթչեր
3) Ռոնալդ Ռեյգան
4) Հարի Թրուման

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 24-րդ և 25-րդ հարցերին:
«Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը»:

24 **Տրվածներից ո՞րի գաղափարախոսության արդյունք է վերը բերված սկզբունքը:**

1) Լուսավորական շարժում
2) Վերածնունդ
3) Սքոլաստիկա
4) Ռեֆորմացիայի շարժում

25 **Նշվածներից ո՞վ է այդ ժամանակաշրջանի ներկայացուցիչ:**

1) Ռոջեր Բեկոն
2) Դանթե Ալիգերի
3) Ժան Կալվին
4) Ջոն Լոկ

26 **Տերմինները համապատասխանեցրե՛ք իրենց բովանդակությանը.**

1. Պերիօյկոսներ
2. Դեմարքոսներ
3. Օպտիմատներ
4. Լոգոգրափոսներ

ա. Պատմական բնույթի առաջին երկերի հեղինակները Հունաստանում
բ. Հռոմի Ծերակույտի անդամներ
գ. Քրմական դասի ներկայացուցիչներ Հին Հռոմում
դ. Ընտրովի ղեկավարներ Ատտիկայի ինքնուրույն միավորներում
ե. Անձնապես ազատ, քաղաքացիական իրավունքներից զուրկ սոցիալական պումբ Սպարտայում

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա
2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ
3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ

27 **Ո՞րն է բարոկկո տերմինի բացատրությունը։**

1) Բնական, բնություն
2) Խորհրդապաշտություն
3) Արտասովոր, տարօրինակ
4) Արտահայտչականություն

28 **Գեղարվեստական մշակույթին վերաբերող տրված պնդումներից ո՞րը ճիշտ չէ։**

1) Էռնեստ Հեմինգուեյը, Էրիխ Ռեմարկը, Ռիչարդ Օլդինգտոն իրենց ստեղծագործություններում արտահայտել են բողոք Առաջին աշխարհամարտի մարդկային սպանդի դեմ։
2) Խորհրդային Միության «ձնհալի» շրջանում Եվգենի Եվտուշենկոն, Բելա Ախմադուլինան և այլք իրենց ստեղծագործություններում առաջ են քաշել սոցիալ-քաղաքական հարցեր։
3) Թատերական արվեստում փայլատակել է Չարլզ Չապլինի թատերական դպրոցը, ով Գերմանիայում իրականացրել է «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրությունը։
4) Պաբլո Պիկասոն «Գեռնիկա» ստեղծագործության մեջ արտահայտել է իր ցասումը ֆաշիզմի ոճրագործությունների դեմ։

29 **Հետսառըպատերազմյան նոր աշխարհակարգին վերաբերող տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա.Նոր աշխարհակարգ հասկացությունը շրջանառության մեջ է դրել ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը։

բ. Համագործակցության մթնոլորտի ստեղծման նպատակով Ռուսաստանը միացել է Մեծ յոթնյակին, որից հետո կառույցը ստացել է Մեծ ութնյակ անվանումը։

գ. ԱՄՆ-ում համաշխարհային առևտրի կենտրոնի շենքերի ոչնչացումը իրականացրել է Աբդուլլա Ազզամի ղեկավարած «Համաս» ահաբեկչական կազմակերպությունը։

դ. ԱՄՆ-ՌԴ հարաբերությունները ջերմացել են Դոնալդ Թրամփի նախագահության օրոք և կողմերը ստորագրել են միջուկային հրթիռների կրճատման վերաբերյալ պայմանագիր։

ե. Ռուսաստանն իր աջակցությունն է հայտնել ԱՄՆ-ին՝ 2003 թվականին տեղ գտած ամերիկյան ներխուժմանը Իրաք։

զ.Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները պատժամիջոցներ են կրառել Ռուսատանի Դաշնության դեմ։

է.2001 թ. ահաբեկչության կազմակերպչին չհանձնելու պատճառով Վաշինգտոնը պատերազմական գործողություններ է սկսել Աֆղանստանի դեմ։

1) բ, զ, է
2) ա, դ, ե
3) գ, դ, է
4) դ, ե, զ

30 **Տրված պնդումներից որո՞նք են վերաբերում Դիոկղետիանոսի կառավարման շրջանին։**

ա.Հռոմեական կայսրությունը բաժանվել է երկու մասի՝ արևելյան (կենտրոնը՝ Նիկոմեդիա) և արևմտյան (կենտրոնը՝ Միլան)։

բ. Ստեղծվել է մշտական, վարձու հիմունքներով գործող բանակ։

գ. Նվաճվել է Բրիտանիայի մեծ մասը, Թրակիան, Մավրիտանիան։

դ.Պետական բարձր պաշտոնների են նշանակվել մեծ քանակությամբ ստրուկներ՝ որպես հակակշիռ Ծերակույտի։

ե.Ստեղծվել է ռազմական միապետություն՝ մեկ անձի անսահմանափակ իշխանությամբ։

զ. Նվաճվել և հռոմեական կայսրությանն է միացվել Դակիան (այժմ՝ Ռումինիա)։

է.Կայսրությունը բաժանվել է 12 դիոցեզների, որոնք էլ իրենց հերթին՝ պրովինցիաների։

1) բ, գ, դ
2) ե, զ, է
3) գ, դ, ե
4) ա, ե, է

31 **Տրված պնդումներից որո՞նք են վերաբերում Շառլ դը Գոլի՝ որպես Ֆրանսիայի նախագահ գործունեությանը։**

ա.Ֆրանսիան դուրս է բերել ՆԱՏՕ-ից և պահանջել երկրից հանել դաշինքի զորքերն ու ռազմական հենակայանները։
բ. Ընդունել է հետպատերազմյան Ֆրանսիայի նոր սահմանադրությունը՝ սկիզբ դնելով Չորրորդ հանրապետությանը։
գ.Պետական հիմնադրամներից գաղտնի գումար է տրամադրել ֆաշիստների ղեկավարներին՝ կախվածության մեջ պահելու համար։
դ. Նորովի է նայել գաղութային խնդրին և ճանաչել է Ալժիրի անկախությունը։
ե.Արտաքին քաղաքականության մեջ կարևորել է «Ֆրանսիայի վեհության» գաղափարը՝ նպատակ ունենալով հասնել Ֆրանսիայի գերիշխանությանը Եվրոպայում։
զ.Նախանշել է մանդատային տարածքների՝ Սիրիայի և Լիբանանի արտաքին քաղաքականությունը։
է.Շրջանառության մեջ է դրել դիրիժիզմ հասկացությունը, որը նախատեսում էր պետության միջամտությունը տնտեսության կառավարմանը։

1) դ, զ, է
2) բ, գ, դ
3) ե, զ, է
4) ա, դ, ե

32 **Տրվածներից ո՞րը ԽՍՀՄ փլուզման հետևանք չէ։**

1) Հնարավոր դարձավ ավելի զորեղ ու հաստատուն Եվրամիության ստեղծումը։
2) Մեծ ծավալ ընդունեց մտավոր ներուժի արտահոսքը։
3) Ակտիվացավ քաղաքական իսլամը։
4) Ավարտվեցին սառը պատերազմի ընթացքում Արևմտյան Եվրոպայում սկսված պատերազմները։

33 **Տրվածներից որո՞նք են Առաջին աշխարհամարտի հետևանքներ։**

ա. Լատվիա, Լիտվիա, Էստոնիա պետությունների առաջացումը։
բ. 65 մլն մարդկային կորուստը։
գ. Ատոմային ռումբի կիրառումը։
դ. Համաշխարհային գաղութային համակարգի փլուզումը։
ե. Հունաստանի անկախացումը։
զ. Քիմիական զենքի կիրառումը։
է. Մշակութային արժեքների թանգարան համարվող Լուվեն քաղաքի հիմնովին ավիրումը։

1) ա, զ, է
2) բ, դ, ե
3) բ, գ, է
4) դ, ե, զ

34 **Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող տրված իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի կնքումը Վերսալյան պալատում։
բ. Կոմպիենի զինադադարի կնքումը։
գ. Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը։
դ. Վաշինգտոնի խորհրդաժողովի ավարտը։
ե. Փարիզի խորհրդաժողովի բացումը։
զ. Գերմանիայի և ԱՄՆ-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը։
է. Մուդրոսի զինադադարի կնքումը։

1) բ, է, ե, ա, դ, զ, գ
2) է, բ, ա, ե, գ, զ, դ
3) է, բ, ե, ա, զ, դ, գ
4) բ, ե, է, դ, ա, գ, զ

35 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա.Շանհայի համագործակցության կազմակերպության ստեղծումը։
բ. «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում։
գ. Հեղափոխական «Մայդանը» Ուկրաինայում։
դ. «Կակաչների հեղափոխությունը» Ղրղստանում։
ե. «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում։
զ.Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպության ստեղծումը։

1) ա, բ, զ, դ, գ, ե
2) զ, ե, բ, ա, գ, դ
3) զ, ա, ե, բ, դ, գ
4) ա, զ, բ, ե, դ, գ

36 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1) 1701 թ. Իսրայել Օրու կազմած և Հովհան Վիլհելմին ներկայացրած Հայաստանի ազատագրության ծրագիրը անվանվում է Մոսկովյան։
2) 1771 թ. Հնդկաստանում Հովսեփ Էմինի ստեղծած գաղափարական խմբակը հայտնի է Մադրասի խմբակ անունով։
3) Մադրասի խմբակի անդամների կազմած ապագա հայկական պետության կառավարման օրենքների հավաքածուն անվանվում է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»։
4) Մովսես Սարաֆյանի կազմած և Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացրած Հայաստանի ազատագրության ծրագիրը անվանվում է Հյուսիսայի ծրագիր։
5) 18-րդ դարի 1-ին քառորդում Արցախում կազմակերպված պաշտպանական հենակետային ամրոցները անվանվում են սղնախներ։
6) 1736 թ. Նադիրը Ղարաբաղի բեկլարբեկությունը բաժանեց երկու մասի՝ Արցախը դարձնելով առանձին վարչական միավոր, որի կազմում ընդգրկված մելիքությունները անվանվեցին Խամսայի մելիքություններ։
7) Արցախի ինքնավարությունը խորհրդանշող հոգևոր իշխանությունը անվանվում էր Գանձասարի կաթողիկոսություն։

37

Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ։

1) Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետությունում ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվել են ժողովրդական կոմիսարիատներ։
2) Փետրվարյան ապստամբության ժամանակ դաշնակցության ղեկավարությամբ Երևանում ստեղծված իշխանության նոր մարմինը անվանվել է Հայրենիքի փրկության շարժում։
3) ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարում կազմավորված օրենսդիր իշխանության մարմինն անվանվել է Կենտրոնական գործադիր կոմիտե։
4) Մոսկվայի 1921 թ. պայմանագրով Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը ինքնավար կարգավիճակով փոխանցված տարածքն անվանվել է «Նախիջևանի մարզ»։
5) 1920 թ. նոյեմբերի 29-ին 11-րդ կարմիր բանակի շարքերից առանձնացված և ՀՀ տարածք մտած զորամիավորումը կոչվել է «Կարմիր գունդ»։
6) Հայաստանի խորհրդայնացումից հետո իշխանության տեղական գործադիր ժամանակավոր նշանակովի մարմինները կոչվել են հեղկոմներ։
7) 1921 թ. կեսերից Խորհրդային Հայաստանում գործադրված տնտեսական քաղաքականությունը, որի առանցքը պարենային հարկի կիրառումն էր, կոչվել է Ռազմական կոմունիզմ։

38

Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։

1) Աքեմենյան տիրապետության շրջանում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս։
2) 226 թ. Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալուց հետո ստեղծված իրավիճակը Մովսես Խորենացին անվանել է Ժամանակ անիշխանության։
3) I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանն անվանվում է բուն հելլենիստական ժամանակաշրջան։
4) Հին Հայոց հավատքի և քրիստոնեության սկզբնական շրջանում «հեթանոս» նշանակել է «ցեղ», «ազգ», միջնադարում՝ «ոչ քրիստոնյա»։
5) Հայկազուն-Երվանդականների օրոք զորքի գերագույն հրամանատարը կոչվում էր առաջին սպարապետ։
6) Արշակունյաց շառավիղներից ձևավորված ազնվական խավի ներկայացուցիչները կոչվում էին ոստանիկներ։
7) Արշակունյաց արքունիքում թագավորական պահակազորի հրամանատարին անվանում էին բդեշխ։

39 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Դավիթ Անհողինն ընդարձակել է իր թագավորության սահմաններն ի հաշիվ Գանձակի և Տփղիսի ամիրայությունների։
2) Կարսի թագավորության հիմնադիրը Սմբատ II-ի եղբայր Մուշեղ Բագրատունին էր։
3) Տարոնի զավթումից հետո Բյուզանդիան գրավել է Մանազկերտը։
4) Աշոտ II-ը հարձակվել է Տփղիսի ամիրայության վրա և ջախջախել Յուսուֆ ամիրայի կայազորը։
5) Յուսուֆը Սյունյաց Սմբատ թագավորից պահանջել է, որ նա Նախճավանի Երնջակ բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման տա։
6) Անանիա Մոկացի կաթողիկոսը 948 թ. կաթողիկոսական աթոռն Աղթամար կղզուց տեղափոխեց Կարինից հյուսիս գտնվող Արգինայի վանք։
7) Գագիկ I-ն իր թագավորությանը միավորել է Սյունիքի մեծ մասը, այդ թվում՝ Վայոց ձորը և Խաչենը։

40 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Սան Ստեֆանոյի պայմանագրի 25-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվել է չհալածել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին։
2) Սան Ստեֆանոյի պայմանագրով Բալկաններում և Արևելքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն առաջացրել է առաջին հերթին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դժգոհությունը։
3) 1878 թ. մայիսի 18-ին Լոնդոնում կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կրետե կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները։
4) Մեծ տերությունների ներկայացուցիչները թույլ չեն տալիս հայ պատվիրակներին մասնակցելու Բեռլինի վեհաժողովին և Հայկական հարցը հատկապես Մեծ Բրիտանիայի քաղաքականության հետևանքով վճռվում է առանց հայերի մասնակցության։
5) 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին կրկին ապստամբած զեյթունցիների պատվիրակները հասել են ռուսական զորքերին և Հ. Լազարևից պահանջել են իրենց զենք տրամադրել։
6) Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն ստացվում էր, որ Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքների մեղավորները ոչ թե թուրքական իշխանություններն են, այլ քրդերն ու չերքեզները։
7) 1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթացել է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մշակած սցենարով։

41 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1) Երևանի կոնսերվատորիայի հիմնադրման գործում մեծ դեր է խաղացել նշանավոր կոմպոզիտոր և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանը։
2) Էջմիածնում գործող Գիտության և արվեստի ինստիտուտը գլխավորապես զբաղվել է բնական գիտությունների հիմնահարցերով։
3) 1935 թ.բացված ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի, առաջին նախագահ հաստատվել է նշանավոր երկրաբան Ֆրանց Լևինսոն-Լեսինգը։
4) 1924 թ. Հայաստան է տեղափոխվել մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը և դրել հայկական ազգային սիմֆոնիզմի հիմքը։
5) 1967 թ. էլեկտրոնային արագացուցչի շահագործմամբ Հայաստանի և Խորհրդային Միության շատ ֆիզիկոսներ հնարավորություն են ստացել ֆիզիկայի բնագավառում կատարելու բարդ փորձեր։
6) Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը Արտեմ Ալիխանյանի գլխավորությամբ մեծ հաջողությունների է հասել էլեկտրոնային արագացուցչի նախագծման և կառուցման ասպարեզում։
7) 1947 թվականին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ է ընտրվել ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։

42 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Երվանդ սատրապի դուստրը Աքեմենյան արքայից արքայի կինն էր։
2) Պատանի հասակում Տիգրան Երվանդյանը Դարեհ I-ի որսընկերն է եղել։
3) Արտավազդ II-ն 13 հազար զորք է տրամադրել Անտոնիոսին՝ պարթևների դեմ արշավանքին մասնակցելու համար։
4) Արտաշես I-ը երկարատև պայքարի արդյունքում Սելևկյաններից ազատագրել է Տմորիքը։
5) Հռանդեայի պայմանագրով նախատեսված էր, որ Տրդատ II-ն անձամբ Ներոն կայսրից Հռոմում պետք է ստանա Մեծ Հայքի թագավորության թագը։
6) Սանատրուկ արքան կառուցել է Մծբին քաղաքը Մշո դաշտում։
7) Տիր աստծու պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Երազամույն կոչվող վայրում։

43 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1) Ապլղարիպ Արծրունուն են պատկանել Ադանա, Մսիս, Տարսոն, Լամբրոն և Անարզաբա քաղաքները։
2) 11-րդ դարի երկրորդ կեսին հայերը մեծամասնություն էին կազմում Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք շրջաններում։
3) Դաշտային Կիլիկիայի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է մոտ 150-200 մ և աշխարհի արգավանդ դաշտավայրերից մեկն է։
4) Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց Բյուզանդիայից ստացել է Պիզու բերդաքաղաքը։
5) Ռուբեն իշխանն իր իշխանությունը հիմնել է՝ սելջուկների դեմ ապստամբելով և Կոռոմոզոլ բերդում ամրանալով։
6) 1097 թ. խաչակիրների երկու բանակ Դաշտային Կիլիկիայի գրավման համար համագործակցել է Կոստանդին I-ի հետ։
7) Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում ձևավորված Գող Վասիլի իշխանության կենտրոնը Քեսուն քաղաքն էր։

44 **Տրվածներից որո՞նք 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հետևանքներ չեն։**

1) Սուլթանը հրապարակեց հրամանագիր 1876 թ. սահմանադրության վերականգնման մասին։
2) Օսմանյան կայսրությունը հռչակվեց խորհրդարանական հանրապետություն։
3) Տարագիր և վտարանդի բազմաթիվ հայեր Այսրկովկասից ու այլ վայրերից վերադարձան Արևմտյան Հայաստան։
4) Երիտթուրքերի ներքին և արտաքին քաղաքականության առանցքը դարձավ պանիսլամիզմը։
5) Օսմանյան կայսրությունում աշխուժացավ հայ գրական շարժումը, առաջադիմեց կրթամշակութային կյանքը։
6) Հեղաշրջումից հետո հայկական կուսակցությունները ճանաչեցին Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, դադարեցրին իրենց ընդհատակյա գործունեությունը։
7) 1909 թ. ապրիլից խզվեցին երիտթուրքերի և հայ ազգային բոլոր կուսակցությունների համագործակցային հարաբերությունները։

45

Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։

1) 1918 թ. վերջին Վրաստանի դեմ Հայաստանի իշխանությունների կողմից ռազմական գործողություններ սկսելու պատճառը վրացական զինագրավումից հայկական տարածքներն ազատագրելն ու բնակչության անվտանգությունն ապահովելն էր։
2) 1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրի հետևանքով Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվեցին «վիճելի տարածքներ»։
3) 1920 թ. «Հայկական լեգեոնը» լուծարելու պատճառը Կիլիկիային ինքնավարություն տալու ֆրանսիական իշխանությունների մտադրությունն էր։
4) 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ բոլշևիկյան զորքի Հայաստան ներխուժման սպառնալիքի պատճառով հայոց զորքի մի մասն տեղակայվել է Դիլիջան-Իջևանի և Նախիջևանի շրջանում։
5) 1920 թ. նոյեմբերի 18-ին զինադադարի թուրքական պայմանները ընդունելու պատճառը խորհրդային զորքերի մուտքն էր Հայաստան։
6) 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի հետևանքով իշխանությունն անցել է Երևանում գտնվող Ռազմահեղափոխական կոմիտեին։
7) Երևանի համաձայնագրի հետևանքով Հայաստանի խորհրդային իշխանությունները ճանաչեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը և կատարեցին թուրքական կողմի պահանջները։

46 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Գոդերձ II-ի հետ կնքած պայմանագրի շնորհիվ Տիգրան Մեծը հաստատում է Պարթևստանի նկատմամբ Մեծ Հայքի գերիշխանությունը։
2) Ք. ա. 92 թ. հռոմեա-պարթևական պայմանագրի շնորհիվ Տիգրան Մեծին հաջողվել է իր թագավորությանը միացնել Ադիաբենեն, Միգդոնիան և Օսրոյենեն։
3) «Ռազմական հզոր ուժ ունենալու» շնորհիվ Տիգրան Մեծը Սելևկյան գահին հրավիրվելու ամենահավանական թեկնածու է դիտարկվել Սելևկյան ավագանու կողմից։
4) Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց հայ-հռոմեական պատերազմում կրած պարտության պատճառով։
5) Արտաշատի պայմանագրի հետևանքով Տիգրան Մեծը կերցրեց «արքայից արքա» տիտղոսը։
6) Տիգրան Մեծը չէր ցանկանում Հռոմին հանձնել Միհրդատ Եվպատորին, քանի որ վերջինս Մեծ Հայքի թագավորությանն էր փոխանցել Փոքր Հայքի տարածքի կեսը։
7) Տիգրան Մեծը հրաժարվեց Արտաշատի մոտ Պոմպեոսի հետ ճակատամարտի գաղափարից, քանի որ անհանգստանում էր որդու՝ Տիգրան Կրտսերի անվտանգության համար։

47 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) Հայերի կռվելու ունակ ներուժը ցեղասպանության իրականացման առաջին փուլով վերացնելու պատճառը Օսմանյան կայսրության հայ բնակչության բնաջնջումը դյուրացնելն էր։
2) Կ.Պոլսում և Զմյուռնիայում հայերի զանգվածային կոտորածներ չկազմակերպելու պատճառը տեղի հայ մեծահարուստների տնտեսական ներուժն էր։
3) Ռուսական զորքի հուլիսյան նահանջի պատճառով Արմենակ Եկարյանի ղեկավարած Վանի հայկական իշխանությունը դադարել է գործելուց։
4) Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցվեց 9-10 միլիարդ ֆրանկի վնաս։
5) 1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին տեղի ունեցավ կամավորական ութ ջոկատների վերակազմակերպումը վեց գումարտակների, որոնք մտան ռուսական բանակի կազմի մեջ։
6) Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքման պատճառը Կովկասյան ճակատում ռուսների հաղթանակներից Անգլիայի և Ֆրանսիայի անհանգստությունն էր։
7) 1915 թ. հուլիսին Վանից ռուսական զորքերի անսպասելի նահանջի պատճառով տեղի հայությունը վերսկսեց ինքնապաշտպանությունը թուրքական զորքերի դեմ։

48 **Ընտրե՛ք հասկացությունների ճիշտ բացատրություններով տարբերակները։**

1) Հին Հնդկաստանի հնդարիական կրոնի համաձայն աստվածները բաժանվում էին երկու խմբի՝ դայվաներ և ասուրաներ։
2) Բրահմայականության հիմքում ընկած է հոգու վերամարմնավորման գաղափարը. մահից հետո մարդու հոգին մարմնավորվում է կենդանու, բույսի կամ այլ մարդու մեջ։
3) Հին Աթենքում հաղթական կամարները կոչվում էին աքվեդուկներ։
4) Բուդդայականության դավանական հիմքը նիրվանայի՝ մեսիայի գալստյան միջոցով փրկության հասնելու գաղափարն է։
5) Փիլիսոփայության առաջին՝ միլեթյան դպրոցը աշխարհի նյութական նախահիմք էր համարում ջուրը, օդը կամ ալկմեոնը (անսկիզբ և անվերջ սկզբնանյութ)։
6) Դասական շրջանի հունական քաղաքի հասարակական և առևտրական կենտրոնը կոչվում էր ագորա։
7) Հին Հռոմի կենտրոնում կառուցված աստվածների ընդհանուր տաճարը կոչվում էր Պարթենոն։

49 **Հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Միջնադարյան Եվրոպայում ծառայության դիմաց հողի շնորհումը կոչվում էր բենեֆիցիում (պայմանական հողատիրություն):
2) Դուքսերը և կոմսերը միջնադարյան Եվրոպայում բարոններին ենթարկվող խոշոր հողատերեն էին:
3) Ավատատիրոջ հողի տերունական մասը կոչվում էր բենեֆիցիում:
4) Միջնադարյան Եվրոպայում թագավորը համարվում էր որպես ավատատերերի գերագույն սենյոր:
5) Միջնադարյան Եվրոպայում ավատատիրական աստիճանակարգության համակարգում եպիսկոպոսները և բարոնները հավասար աստիճանի վրա էին:
6) Միջնադարյան Եվրոպայում ավատատիրական աստիճանակարգության երրորդ աստիճանն զբաղեցնող հողատերերին անվանում էին բարոններ:
7) Միջնադարյան Եվրոպայում ավատատիրական աստիճանակարգության համակարգում վանահայրերը և ասպետները հավասար աստիճանի վրա էին:

50 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) XIV դարի իսպանական դասային ներկայացուցչական մարմինը կոչվում էր Ազգային կոնվենտ:
2) XVIII դարի վերջին ազգային միավորման համար Իտալիայում ծավալված շարժումը կոչվում էր Ռիսորջիմենտո:
3) Վիեննայի վեհաժողովի որոշմամբ ստեղծված պետական կազմավորումը կոչվում էր Գերմանական միություն:
4) ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը կոչվում էր «Նոր ազատություն»:
5) Անգլիայում տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի և հասարակության ազատականացման համար ծավալված շարժումը կոչվում էր չարտիզմ:
6) Ֆրանսիական երկրորդ Սահմանադիր ժողովը կոչվում էր Դասային համաժողով:
7) 63 հոդվածից բաղկացած միջնադարյան Անգլիայի Սահմանադրությունը կոչվում էր «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»:

51 **Տրված պնդումներից որո՞նք ճիշտ չեն։**

1) 2004 թ. սկսած հայ զինվորները՝ հունական բանակի զորախմբի կազմում խաղաղապահ առաքելություն են իրականացնում Կոսովոյում։
2) 2010-2011 թթ. Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում ծավալված հեղափոխական բուռն իրադարձությունները ստացել են Արաբական գարուն անվանումը։
3) ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները Սիրիայում 2018 թ. տեղ գտած քաղաքացիական կռվում պաշտպանել են նախագահ Հաֆեզ ալ-Ասադի իշխանությունը։
4) Հայաստանը ներգրավված է ՆԱՏՕ-ի շրջանակներում գործող «Եվրատլանտյան համագործակցության խորհուրդ» կազմակերպության մեջ։
5) 2001 թ. Մակեդոնիայի կառավարության և ալբանական համայնքի միջև կնքված համաձայնագրով ալբանաբնակ շրջանները հայտնվել են ալբանացի զինյալների վերահսկողության տակ։
6) 1990-ական թթ. վերջերին Սերբիայի կազմում գտնվող Կոսովոյի ալբանական բնակչությունը ճանաչել է Բելգրադի իշխանությունը։
7) 1997 թ. ընդունված նոր ռազմավարական հայեցակարգով ՆԱՏՕ-ն իրեն իրավունք էր վերապահում ռազմական ուժ կիրառելու կազմակերպության անդամ երկրների տարածքից դուրս։

52 **ԽՍՀՄ վարած պլանային տնտեսությանը վերաբերող տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) 1927 թ. Խորհրդային պետությունն որդեգրել է երկրի արդյունաբերացման քաղաքականությունը։
2) 1937 թ. Խորհրդային Միությունը արդյունաբերական ընդհանուր արտադրանքի ծավալով Եվրոպայում զբաղեցրել է առաջին տեղը։
3) 1929 թ. մեկնարկած համատարած կոլեկտիվացման քաղաքականությունը իրականացվել է կամավոր-պարտադիր սկզբունքով։
4) 1928-1940 թթ. գործարկվել է 9000 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն։
5) 1933 թ. ՝ երկրորդ հնգամյակի սկզբին, գյուղացիական տնտեսությունների 93 տոկոսը կոլեկտիվացվել էր։
6) 1932-1933 թթ. հացահատիկի արտադրության գլխավոր շրջաններում սով է սկսվել, որին զոհ է գնացել մոտ 7 մլն մարդ։
7) Առաջին հնգամյա պլանի ավարտին՝ 1932 թ., էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 10 անգամ։

53 **Տրված պնդումներից որո՞նք են վերաբերում Թութմոս III-ի կառավարման շրջանին։**

1) Թագավորության սահմանները հյուսիսում հասել է մինչև Կարքեմիշ։
2) Կատարվել է կրոնական բարեփոխում և Աթոնը հռչակվել է Եգիպտոսի միակ աստված։
3) Հաշտությամբ ավարտվել է Խեթական տերության դեմ երկարատև հակամարտությունը։
4) Ստեղծվել է գաղութային վարչակազմ նորանվաճ երկրների հետ տարվող քաղաքականությունը իրագործելու համար։
5) Կառուցվել է Աբու-Սիմբելի ժայռակերտ տաճարը։
6) Առաջին անգամ նվաճված երկրների վրա սահմանվել են հարկեր և այլ պարտականություններ։
7) Եգիպտոսը կորցրել է իր ազդեցությունը Արևելամիջերկրական ավազանի երկրների նկատմամբ։

54 **Տրվածներից որո՞նք են սխալ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1) 1950-1980-ական թթ. տնտեսության թռիչքաձև վերելքի հետևանքով Ճապոնիան դարձավ կապիտալիզմի երրորդ տնտեսական կենտրոնը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին։
2) Չինաստանի տնտեսության արդիականացման սեփական՝ «չինական մոդելի» շնորհիվ Չինաստանը դարձավ արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքներ արտահանող պետություն։
3) Ինդիրա Գանդիի ջանքերի շնորհիվ Հնդկաստանը դարձավ Չմիավորված երկրների շարժման հիմնադիրներից մեկը։
4) 1958 թ. Մաո Ցզեդունի հայտարարած նոր տնտեսական ծրագրի իրագործման հետևանքով Չինաստանում թույլատրվեց մասնավոր կապիտալի գործունեությունը, ստեղծվեցին ազատ տնտեսական գոտիներ։
5) Հնդկաստանում տնտեսության զարգացման հնգամյա պլանների կիրառման շնորհիվ ստեղծվեցին ժամանակակից մետաղաձուլական, քիմիական, ատոմային և էլեկտրոնային արդյունաբերություն, գերժամանակակից տեխնոլոգիաներ։
6) Պոտսդամի խորհրդաժողովում կայացված որոշման շնորհիվ Ճապոնիան ապառազմականացվեց և դարձավ ժողովրդավարական երկիր։
7) 1947 թ. մինչև օրս Ճապոնիայում գործող սահմանադրության շնորհիվ բարձրագույն իշխանությունը պատկանում է կայսրին, ով համարվում է «ազգի միասնության խորհրդանիշը»։

55 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Էխնաթոնի մահվանից հետո նրա հաջորդներն ստիպված էին վերականգնել Ամոնի և մյուս աստվածների պաշտամունքը։
2) Հին Եգիպտոսում Միջին թագավորության շրջանում Արևի աստված Ռան նույնացվում էր Թեբեի գլխավոր աստված Ամոնի հետ։
3) Հին Հունաստանում քաղաքական մասնատվածության պատճառով հարևաններին անվանում էին բարբարոսներ։
4) Դարեհ I-ի կառուցած «Արքայական ճանապարհը» Շոշ մայրաքաղաքը միացրել է Ադրիատիկ ծովի ափամերձ քաղաքների հետ։
5) Մակեդոնիայի և Հունաստանի գրավմամբ Հռոմեական Հանրապետության անմիջական տիրապետությունը հաստատվեց Էգեյան ծովի ամբողջ ավազանում։
6) Էպիրոսի արքա Պյուռհոսի բանակի՝ Իտալիայում ափ իջնելն ստիպեց Հռոմին դաշինքը խզել Կարթագենի հետ։
7) Էտրուսկյան Վոլսինիում քաղաքի գրավումից հետո Հռոմն ապահովեց իր գերիշխանությունը Պո գետի՝ գալլերով բնակեցված տարածքում։

56 **Հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1) Հռենոսի ապառազմականացված գոտին Հռենոսից արևելք ընկած տարածք է, Վաշինգտոնի պայմանագրով 20 տարով հանձնված Անտանտի վերահսկողությանը։
2) ՄԱԿ-ի միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական պատասխանատվությունը կրող կառույցը կոչվում է Անվտանգության խորհուրդ։
3) «Նոր կուրսը» ԱՄՆ արտաքին քաղաքական կուրս է, որով սահմանվում էր Եվրոպան խորհրդային ծավալապաշտությունից փրկելու ծրագիրը։
4) Եռյակ միությունը հակահիտլերյան ռազմաքաղաքական խմբավորում է՝ ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ առաջնորդների ղեկավարությամբ։
5) «Ազատ Ֆրանսիան» Շառլ դը Գոլի գլխավորությամբ ստեղծված ազատագրական պայքարի շարժում է ընդդեմ գերմանական զավթիչների։
6) Մյունխենյան գործարքը Չեմբեռլենի, Դալադիեի, Հիտլերի և Մուսոլինիի միջև ձեռք բերված համաձայնություն է, որով Սուդեթի մարզը, Չեխոսլովակիայի տարածքի 1/3-ի տարամադրվել է Գերմանիային, Լեհաստանին և Հունգարիային։

7) Պաշտպանության պետական կոմիտեն 1941 թ. հունիսի 30-ին Իոսիֆ Ստալինի նախագահությամբ ստեղծված մարմին է, որում կենտրոնացվել է երկրի ռազմական, քաղաքական, տնտեսական կառավարումը։
8) Տնտեսական փոխօգնության խորհուրդը տնտեսա-քաղաքական խմբավորում է, որը պետք է ապահովեր Արևմտյան Եվրոպայի երկրների անվտանգությունը։

57 **1894-1896 թթ. հայերի կոտորածներին վերաբերվող տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Օսմանյան կայսրության հայ և այլ քրիստոնյա ժողովուրդների կոտորածների դարավոր քաղաքականությունը 1890-ական թթ. սկզբից դրվել է պետական մակարդակի վրա։
2) 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կարինի եկեղեցու բակում թուրքական զորքերը կրակ են բացել հայ բնակչության վրա և սպանել ու վիրավորել 2000 մարդու։
3) 1894 թ. Սասունի գավառ ներխուժած թուրքական զորքերը, համիդիե ջոկատներն ու ավազակախմբերը մինչև օգոստոսի վերջը կոտորել են Սասունի 10 հազար խաղաղ բնակիչների։
4) 1894-1896 թթ. զանգվածային կոտորածների արդյունքում բազմահազար արևմտահայեր արտագաղթել են տարբեր երկրներ, մոտ 200 հազար՝ Ռուսաստան, 100 հազար՝ Եվրոպա և Ամերիկա։
5) Մ. Տամատյանի և ավելի քան երկու տասնյակ սասունցիների ձերբակալությունից հետո Սասունի պաշտպանության ընդհանուր ղեկավարությունը ստանձնել է Մեծն Մուրադը։
6) 1895 թ. հոկտեմբերի 18-ին կազմվել է Զեյթունի ժամանակավոր կառավարությունը՝ Նազարեթ Չավուշի գլխավորությամբ։
7) 1896 թ. հունիսի 8-ից դեպի Պարսկաստան շարժվող վանեցիների վրա Սբ Բարդուղիմեոս վանքից ոչ հեռու հարձակվել են թուրքական կանոնավոր զորքերն ու քրդական մազրիկ ցեղի հրոսակները։
8) Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Թուրքիայի հյուպատոսները 1895 թ. հուլիսին արձանագրել են, որ Վանում տեղի է ունեցել հայ բնակչության համատարած ջարդ։

58 **Հայրենական մեծ պատերազմին վերաբերվող պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Ֆաշիստական զորքերի Ստալինգրադին և Կովկասին մոտենալու ժամանակ Թուրքիայում գլուխ են բարձրացրել պանթյուրքիզմի գաղափարախոսները, որոնք ծրագրում էին զավթել նաև Խորհրդային Հայաստանի տարածքը։
2) Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում շահագործման է հանձնվել շուրջ 30 արդյունաբերական նոր ձեռնարկություն՝ ավիացիոն, ավտոդողերի, կոմպրեսորների, ժամացույցի և այլ գործարաններ։
3) 408-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին ձգվել է Մոզդոկ քաղաքից մինչև Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա և Չեխոսլովակիա։
4) 89-րդ լեռնահրաձգային դիվիզիան կազմավորվել է Հայաստանում 1920-1922 թթ. ՀՀ բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման արդյունքում։
5) Ամերիկյան բանակի լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը պարգևատրվել է ԱՄՆ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանով։
6) Սփյուռքահայության միջոցներով կազմավորված «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը ուղարկվել է Հովհաննես Բաղրամյանի գլխավորած Բելառուսական ռազմաճակատ։
7) 1943 թ. Հայաստանի կառավարությանը կից ստեղծվել է եկեղեցու գործերի խորհուրդ, որը միջնորդ էր լինելու եկեղեցու և պետության միջև։
8) 1945 թ. սեպտեմբերի 2-ին Գերմանիան ստորագրել է անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով ավարտվել է Երկրորդ համաշխարհային պատերազմը ։

59 **Հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1) Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր։
2) Կիլիկյան Հայաստանում ձիավարությանը, նետաձգությանը, նիզակի և սրի գործածությանը տիրապետող ասպետին անվանում էին ոստանիկ։
3) Արքունի պալատի կառավարիչը Կիլիկյան Հայաստանում կոչվում էր սենեսկալ։
4) Կիլիկյան Հայաստանում մարաջախտը բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարն էր։
5) Պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զորքը կոչվում էր աշխարհաժողով։
6) Արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկյան Հայաստանում կոչվում էր սպասալար։
7) Կիլիկյան Հայաստանում սպարապետը կոչվում էր ամիրսպասալար։
8) Կիլիկյան Հայաստանում պետական նշանակության գործերը քննող դատական ատյանը կոչվում էր Սսի արքեպիսկոպոսական դատարան։

60 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ։**

1) Եպիսկոպոս Գրիգորիսի սպանության վրեժի լուծումը։
2) Սոհեմոսի երկրորդ գահակալությունը Մեծ Հայքում։
3) Բակուր Արշակունու գահընկեցությունը Մեծ Հայքում
4) Տրդատի և գոթական իշխանի մենամարտը։
5) Տրդատ II-ի գահակալության ավարտը Մեծ Հայքում։
6) Վրթանես Ա Պարթևի ընտրվելը Հայոց կաթողիկոս։

61 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Պելոպոնեսյան պատերազմների ավարտը։
2) Կլիսթենեսի բարեփոխումների սկիզբը։
3) Մարաթոնի ճակատամարտը։
4) Պարսկական բանակի ջախջախումը Սալամին կղզու մոտ։
5) Սոլոնի բարեփոխումների սկիզբը։
6) Աթենքի «Երկար պարիսպների» կառուցման ավարտը։

62 **Միջնադարյան Ռուսիային վերաբերող պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Նևայի ճակատամարտը։
2) Ոսկե հորդայի իշխանության վերջնական տապալումը։
3) «Ռուսկայա պրավդայի» ստեղծումը։
4) Քրիստոնեության հռչակումը պետական կրոն։
5) Գերմանացի խաչակիրների պարտությունը Չուդ լճի մոտ։
6) Առաջին դասային ներկայացուցչական ժողովի հրավիրումը։
7) Մոնղոլների պարտությունը Կուլիկովոյի դաշտում։

63 **XX դարի առաջին կեսին տեղի ունեցած իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից։
2) Հանրապետության հռչակումը Թուրքիայում։
3) Ճապոնիայի միանալը Բեռլին-Հռոմ ռազմական միությանը։
4) Իրանի անկախության ճանաչումը անգլո-իրանական համաձայնագրով։
5) Ռեզա խանի հռչակումը Իրանի շահ։
6) Ջավահառլալ Ներուի ընտրվելը Հնդկական ազգային կոնգրեսի նախագահ։
7) Քաղաքացիական պատերազմի սկիզբը գոմինդանականների և կոմունիստների միջև։

64 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ։**

1) Սմբատ Գունդստաբլի մեկնումը Կարակորում։
2) Կոստանդին թագավորահոր և Բաչուի հանդիպումը։
3) Ֆիլիպի և Զաբելի ամուսնությունը։
4) Մառի ճակատամարտը։
5) Միրիոկեֆալոնի ճակատամարտը։
6) Հեթում I-ի մեկնումը Կարակորում։
7) Ռայմոնդ-Ռուբենի գահակալումը Անտիոքում։

65 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) «Բազմավեպ» պարբերականի առաջին համարի լույսընծայումը։
2) Երևանի բերդում Ալեքսանդր Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը։
3) Համբարձում Լիմոնճյանի կողմից հայկական նոր ձայնագրության ստեղծումը։
4) Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը։
5) Շուշիի թեմական դպրոցի բացումը։
6) Հայ իրականության մեջ առաջին երկսեռ դպրոցի բացումը Կալկաթայում։
7) «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի հրատարակումը Մխիթարյանների կողմից։